ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 18.05.2022թ.),

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Վ. Էլոյանի (լիազորագիր՝ տրված 20.05.2022թ.),

քննելով «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից 11.05.2022թ. ներկայացված (12.05.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/37 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 11.05.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ն:

Մասնավորապես, «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Կոթառ-ժապավեն	640. 000 /Վեց հարյուր քառասուն հազար/	0 /զրո/	640 000 /Վեց հարյուր քառասուն հազար/
2	Մալուխ	90 000/իննսուն հազար/	0 /զրո/	90 000/իննսուն հազար/
3	Էլ. լար	90 000/իննսուն հազար/	0 /զրո/	90 000/իննսուն հազար/
4	Ամրացման հարմարանք	14 000 /տասնչորս հազար/	0 /զրո/	14 000 /տասնչորս հազար/
5	Լամպ E27	1 050 000 /մեկ միլիոն հիսուն հազար/	0 /զրո/	1 050 000 /մեկ միլիոն հիսուն հազար/
6	Ապակե գունդ (300 մմ)	365 000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/	0 /զրո/	365 000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/

7	Հոսանքի արկղ	36 000 /երեսունվեց հազար/	0 /զրո/	36 000 /երեսունվեց հազար/
8	Թողարկիչ 40Ա	52 000 /հիսուներկու հազար/	0 /զրո/	52 000 /հիսուներկու հազար/
9	Սենսոր (գիշեր-ցերեկ)	12 000 /տասերկու հազար/	0 /զրո/	12 000 /տասերկու հազար/
10	Լլուսարձակ (150 Vt)	300 000 /երեք հարյուր հազար/	0 /զրո/	300 000 /երեք հարյուր հազար/
	Ընդհանուր արժեք	2 649 000 /երկու միլիոն վեց հարյուր քառասունինը հազար/	0 /զրո/	2 649 000 /երկու միլիոն վեց հարյուր քառասունինը հազար/

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է որպես ընտրված մասնակից ճանաչել «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.–ի թիվ 526–Ն որոշմամբ (10.10.2019թ.–ի թիվ 1422–Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Տվյալ պարագայում Ընթացակարգի հրավերի 1.1 կետով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկա է հանդիսանում «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ապրանք), որոնք խմբավորված են ներքոնշյալ չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	***Էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայություններ***

Սակայն, «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չափա-բաժինների համարները	**Ծառայության անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	Կոթառ-ժապավեն	**640. 000 /Վեց հարյուր քառասուն հազար/**	**0 /զրո/**	**640 000 /Վեց հարյուր քառասուն հազար/**
2	Մալուխ	**90 000/իններսուն հազար/**	**0 /զրո/**	**90 000/իններսուն հազար/**
3	Էլ. լար	**90 000/իններսուն հազար/**	**0 /զրո/**	**90 000/իններսուն հազար/**
4	Ամրացման հարմարանք	**14 000 /տասնչորս հազար/**	**0 /զրո/**	**14 000 /տասնչորս հազար/**
5	Լամպ E27	**1 050 000 /մեկ միլիոն հիսուն հազար/**	**0 /զրո/**	**1 050 000 /մեկ միլիոն հիսուն հազար/**
6	Ապակե գունդ (300 մմ)	**365 000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/**	**0 /զրո/**	**365 000 /երեք հարյուր վաթսունհինգ հազար/**

7	Հոսանքի արկղ	36 000 /երեսունվեց հազար/	0 /զրո/	36 000 /երեսունվեց հազար/
8	Թողարկիչ 40Ա	52 000 /հիսուներկու հազար/	0 /զրո/	52 000 /հիսուներկու հազար/
9	Սենսոր (գիշեր-ցերեկ)	12 000 /տասերկու հազար/	0 /զրո/	12 000 /տասերկու հազար/
10	Լլուսարձակ (150 Vt)	300 000 /երեք հարյուր հազար/	0 /զրո/	300 000 /երեք հարյուր հազար/
	Ընդհանուր արժեք	2 649 000 /երկու միլիոն վեց հարյուր քառասունինը հազար/	0 /զրո/	2 649 000 /երկու միլիոն վեց հարյուր քառասունինը հազար/

Այսինքն, ուսումնասիրելով «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի ներկայացրած գնային առաջարկը ակնհայտ է, որ «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջների և ենթակա է մերժման, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար և Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ին ճանաչել են որպես ընտրված մասնակից:

Այն ինչ, հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային առաջարկը երկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի հայտը չպետք է բավարար գնահատվեր:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32–րդ կետի 2-րդ ենթակետի և 40-րդ կետի պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետով «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Բողոքի վերաբերյալ Բողոքաբերը 02.06.2022թ. ներկայացրել է հետևյալ լրացումը.

«Հարգելի պարոն Ներսիսյան մեր կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/37 ծածկագրով բողոքի պահանջում առկա է տեխնիկական վրիպակ, այն է՝ նշել ենք թիվ 2 արձանագրության 6-րդ կետով «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները, մինչդեռ «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները կայացվել են թիվ 2 արձանագրությամբ, բայց ոչ այդ արձանագրության 6-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ–ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները»:

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2022թ. ժամը 15:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքը:

2. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքի վերաբերյալ 24.05.2022թ. ներկայացվել է հետևյալ դիրքորոշումը.

«Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի (այսուհետ՝ Բողոքաբեր) կողմից 11.05.2022թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում ենք, որ սույն թվականի ապրիլի 14-ին ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավերի 1-ին մասի 5-րդ բաժնի երկրորդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ընթացակարգի մասնակից «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից հրավերով պահանջվող ձևաչափով ներկայացված գնային առաջարկից բացի ներկայացվել է նաև գնային առաջարկի բաղադրիչների հաշվարկի բացվածք և այլ մանրամասներ որոնք չեն պահանջվել ընթացակարգի հրավերով: Հարկ եմ համարում նշել, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ հայտերի բացման նիստին ներկա են եղել ընթացակարգի թվով երկու մասնակիցների ներկայացուցիչներ, որոնց գնահատող հանձնաժողովը հնարավորություն է ընձեռել անհրաժեշտության դեպքում իրականացնել ներկայացված հայտերի լուսանկարահանում՝ միաժամանակ տեղեկացնելով որ հայտերը գնահատվելու են ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ հայտերի ներկայացնան վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում. ինչով պայմանավորված կարող ենք պնդել, որ բողոքի քննության նպատանով հրավիրված նիստին Բողոքաբերի նշած՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացված հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ տեղեկատվություն բարձրաձայնված լինելը չի համապատասխանում իրականությանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը արձանագրել է, որ «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ն ներկայացրել է տվյալ

ընթացակարգի հրավերով սահմանված կարգով գնման ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում գնային առաջարկը, սակայն ներկայացված փաստաթղթերի փաթեթների մեջ առկա է եղել անհամապատասխանություն՝ այն է «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից հրավերով պահանջվող ձևաչափով ներկայացված գնային առաջարկից բացի ներկայացվել է նաև գնային առաջարկի բաղադրիչների հաշվարկի բացվածք և այլ մանրամասներ որոնք չեն պահանջվել ընթացակարգի հրավերով: Նշվածի մասին տեղեկատվությունը զետեղված է նաև արձանագրությունում՝ «Գևորգ Պետրոյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում ներառված «բնօրինակ» գրառմամբ փաստաթղթերի փաթեթը /այսուհետ՝ Բնօրինակ/ տարբերվում է «պատճեն» գրառմամբ փաստաթղթերի փաթեթից և մեկ աշխատանքային օրով նիստը կասեցրել է և 22.04.2022թ. ծանուցել է արձանագրված անհամապատասխանությունների շտկման:

Հավելեմ նաև, որ հայտերի բացման և գնահատման նիստի ներկա «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի և «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներին հավասար հնարավորություն է տրվել ներկայացված ծրարներում առկա փաստաթղթերին ծանոթանալու, լուսանկարահանելու և անհրաժեշտության դեպքում պատճենները ստանալու, սակայն Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացվել է միայն «Գևորգ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ հրավերով չպահանջվող գնային առաջարկի բաղադրիչների հաշվարկի բացվածքը: Հաշվի առնելով վերոգրյալը և այն փաստը, որ մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը և գնային առաջարկի բացվածքը նույն թիվն է, ուստի չի կարող խոսք լինել երկու գնային առաջարկների մասին, ուստի և 11.05.2022թ. Բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը անհիմն են և բողոքը ենթակա է ամբողջությամբ մերժման: Ինչ վերաբերվում է Ձեր պահանջին ներկայացնելու բացման նիստի տեսաձայնագրությունը, Ձեզ ենք ներկայացնում նիստի ձայնագրությունը հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 5-րդ ենթակետի դ. պարբերության համաձայն «նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում են»»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 20.05.2022թ. ժամը 15:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հաստատել է Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից

Ընթացակարգի շրջանակներում 2 հատ բնօրինակ գնային առաջարկ հավելվածի ներկայացրած լինելը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/37 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ն էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (բաղկացած մեկ չափաբաժնից), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Գևորգ Պետրոսյանը:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում ներառված «բնօրինակ» գրառմամբ փաստաթղթերի փաթեթը տարբերվում է «պատճեն» գրառմամբ փաստաթղթերի փաթեթից, այնուհետև տրվել է վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի հայտը գնահատվել է բավարար:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի ներկայացրած բողոքը լրացմամբ և Պատվիրատուի դիրքորոշումը՝ կից ներկայացրած փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) մրցույթի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

(…)

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 1 օրինակ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Այսպես «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ն էլեկտրականության հետ կապված սարքերի մոնտաժման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Գևորգ Պետրոսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2022թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու հայտում ներառված «բնօրինակ» գրառմամբ փաստաթղթերի փաթեթը տարբերվում է «պատճեն» գրառմամբ փաստաթղթերի փաթեթից, այնուհետև տրվել է վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է արձանագրված թերությունների շտկված տարբերակները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի հայտը գնահատվել է բավարար:

Այսպիսով՝ հիմք ընդունելով Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշումը և սույն ընթացակարգի քննության նպատակով տրամադրված Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի լուսապատճենները՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից Ընթացակարգի շրջանակներում ծրարում ներառված «բնօրինակ» և «պատճեն» փաստաթղթերի փաթեթները տարբերվել են միմյանցից, մասնավորապես՝ փաստաթղթերի «բնօրինակ» փաթեթում առկա է եղել 2 հատ գնային առաջարկ հավելված, որից մեկ գնային առաջարկը կազմվել է՝ 17 չափաբաժինների համար նշելով 17 հատ ծառայության անվանում, իսկ մյուս գնային առաջարկը՝ 1 չափաբաժնով նախատեսված գնման առարկայի համար, իսկ փաստաթղթերի «պատճեն» փաթեթում առկա է եղել միայն մեկ գնային առաջարկ հավելված, մինչդեռ՝ Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վերջինս հայտով ներկայացրած փաստաթղթերի «պատճեն» փաթեթը պետք է ներկայացներ բնօրինակից պատճենահանված տարբերակով, այսինքն՝

ամբողջությամբ համապատասխաներ «բնօրինակ» փաթեթում առկա փաստաթղթերին, ինչը քննարկվող դեպքում այդպես չի եղել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.3 ենթակետը, Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի ներկայացրած հայտը հայտերի բացման նիստում պետք է մերժեր և նույնությամբ վերադարձներ:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Կառլեն Սուրենի Ռուստամյանի կողմից 11.05.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-22/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ՝ Ա/Ձ Գևորգ Պետրոսյանի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու և որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**